ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 հոկտեմբերի 2023թ. **N 73-Ա**
ք. Երևան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԹԻՎ 3 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ուսումնասիրելով թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 7-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 7-Ա որոշմամբ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, հաշվի առնելով թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամի և թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի անփութությունը, միջնորդություն է ներկայացրել Կենտրոնական ընտրական հանձնաժողով՝ թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Սյուզաննա Ռուբենի Ադամյանի և թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Տարոն Գեղամի Մանուկյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականներն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ:

2. Թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, պարզել է, որ այն պարունակում է Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության օրը կատարված գրառում առ այն, որ *«հանձնաժողովի անդամը դուրս է գալիս ընտրատարածքից քվեարկելու համար, որից 5 րոպե հետո դիտորդը նրա անհատական կնիքը N 82126 հայտնաբերում է պատուհանի վրա և տալիս է նախագահին»:* Թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշմամբ նշել է, որ «համաձայն թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Արմեն Իսրայելյանի կողմից տրված բանավոր բացատրության՝ հանձնաժողովի անդամն ընտրական տեղամասից դուրս գալուց առաջ իր անհատական կնիքը թողել է թիվ 3/09 ընտրական տեղամասի քվեարկության սենյակի պատուհանագոգին, որից անմիջապես հետո այն վերցրել է հանձնաժողովի նախագահը և հանձնաժողովի անդամի վերադառնալուց հետո այն

կրկին հանձնել վերջինիս: Հանձնաժողովի նախագահը նշել է նաև, որ տվյալ հանձնաժողովի անդամն այդ ժամին չի եղել ընտրողների ցուցակում ընտրողի ստորագրության դիմաց անհատական կնիք դնող պատասխանատու:»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ 3/09 ընտրական տեղամասի քվեարկության սենյակում քվեարկության օրվա տեսաձայնագրությունը և արձանագրել է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Սյուզաննա Ադամյանը քվեարկության սենյակը լքել է ժամը 17:00-ին: Այդ պահին նա իրականացնում էր քվեաթերթիկների և քվեարկության ծրարի տրամադրման գործառույթ: Սյուզաննա Ադամյանի հեռանալուց կարճ ժամանակ անց՝ ժամը 17:08-ին, դիտորդը հրավիրում է թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի ուշադրությունը դեպի պատուհանը: Վերջինս, մոտենալով պատուհաններին, պատուհանագոգին հայտնաբերում է անհատական կնիք:

Սույն վարչական վարույթի շրջանակներում ներկայացված հանգամանքները պարզաբանելու նպատակով հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատվել թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Սյուզաննա Ադամյանի հետ, ով հաստատեց գրառմամբ ներկայցված հանգամանքների իսկությունը, պատճառաբանեց, որ անուշադրության պատճառով է անհատական կնիքը թողել պատուհանագոգին, նշեց, որ «չեմ ցանկացել տեղադրել պայուսակիս մեջ, քանի որ այն թանաքոտված էր»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Սյուզաննա Ռուբենի Ադամյանն պատշաճ ծանուցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին, սակայն չի ներկայացել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը՝ թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Սյուզաննա Ռուբենի Ադամյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, ենթակա է բավարարման:

3. Թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, պարզել է, որ այն պարունակում է Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության օրը կատարված գրառում առ այն, որ տեղամասային ընտրական հաննձաժողովի կնիքը «*բացակայում էր չհրկիզվող պահարանից:*»: Պարզվել է, որ կնիքը գտնվել է տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի մոտ: Թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը որոշմամբ նշել է, որ «թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Տարոն Մանուկյանի հայտարարությամբ՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի թիվ 0730 համարի կնիքը չի գտնվել չհրկիզվող պահարանում այն պարզ պատճառով, որ քվեարկության նախորդ օրը նշված կնիքով է կնքվել չհրկիզվող պահարանը: Թիվ 3 ընտրատարածքային ընրական հանձնաժողովը գտնում է, որ չնայած առկա է քվեարկութ-

յան նախապատրաստման ընթացքում ՀՀ ընտրական օրենսգրքով կամ օրենսգրքի հիման վրա ընդունված իրավական ակտերով սահմանված կարգի խախտում, սակայն նշված խախտումը չի ազդել տվյալ տեղամասում քվեարկության արդյունքների վրա:»:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 64-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված կանոնակարգման համաձայն՝ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը հանձնաժողովի անդամների և քվեարկության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ *բացում է չհրկիզվող պահարանը, հանում է* հանձնաժողովի անդամների անհատական կնիքները, ըստ անցկացված վիճակահանության՝ տրամադրում նրանց, հանում է քվեաթերթիկները, քվեարկության ծրարները, *կնիքը* և գրանցամատյանում կնիք դնելով՝ հայտարարում է կնիքի համարը:

Ընտրական օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-դ մասի համաձայն՝ «Տեղամասային ընտրական հանձնաժողովին հատկացված ընտրական փաստաթղթերի, տեխնիկական սարքավորումների և այլ պարագաների պահպանման կարգը սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի հունիսի 17-ի թիվ 38-Ն որոշման հավելվածի 3-րդ կետով սահմանված է, որ «ինքնասոսնձվող դրոշմանիշերը, համարակալված կտրոնները, ***տեղամասային ընտրական հանձնաժողովի կնիքը*** և տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների անհատական կնիքները տեղադրվում են պահարանում», իսկ 4-րդ կետով սահմանված է. «Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը պահարանը փակում և փակման մասը թղթով սոսնձում է: Սոսնձված թղթի վրա ստորագրում են տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը. հանձնաժողովի մյուս անդամները և վստահված անձինք ևս կարող են ստորագրել սոսնձված թղթի վրա:»:

Վերը նշված իրավակարգավորումներից ակնհայտ է, որ քվեարկության նախորդ օրը չհրկիզվող պահարանը ոստիկանության ծառայողներին հանձնելիս տեղամասային հանձնաժողովի կնիքը պետք է տեղադրված լինի չհրկիզվող պահարանում, չհրկիզվող պահարանը պետք է փակվի, փակման մասը թղթով սոսնձվի, և տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարը պետք է ստորագրեն սոսնձված թղթի վրա: Սոսնձված թուղթը կնքելու պահանջ սահմանված չէ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Տարոն Գեղամի Մանուկյանը պատշաճ ծանուցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին, սակայն չի ներկայացել:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի՝ քվեարկության նախորդ օրվա՝ 2023 թվականի սեպտեմբերի 16-ին կայացած նիստի տեսաձայնագրությունը և արձանագրել, որ ժամը 16:23-ից 16:28-ն ընկած ժամանակահատվածում թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը

բացում է չհրկիզվող պահարանը, հանում է ինքնասոսնձվող թղթեր, կնիք և կնիքի համար նախատեսված թանաքոտված բարձիկ, փակում է չհրկիզվող պահարանը, սահմանված կարգով ինքնասոսնձվող թղթերը սոսնձում է չհրկիզվող պահարանին, այդ թղթերը կնքում է:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը՝ թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Տարոն Գեղամի Մանուկյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, ենթակա է բավարարման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 3/09 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Սյուզաննա Ռուբենի Ադամյանի հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Սյուզաննա Ռուբենի Ադամյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 3/14 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահ Տարոն Գեղամի Մանուկյանի՝ հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 3 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Տարոն Գեղամի Մանուկյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ **Վ. Հովակիմյան**